



Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի
օգնականների դասավանդման հմտությունների զարգացման
ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Կոտայքի մ., Գետարգելի հիմնական դպրոց

Թեմա՝ Գնահատում, գնահատման տեսակներ, գնահատման
գործիքները 5-րդ դասարանի մաթեմատիկա
առարկայի դասավանդման շրջանակներում

Վերապատրաստող, մենթոր՝ Անուշ Ասատրյան

Ուսուցիչ՝ Տաթևիկ Ալեքսանյան

Երևան 2023

Բովանդակություն

| | |
|---|----|
| 1. Ներածություն ----- | 3 |
| 2. Գնահատում: Գնահատման տեսակները:----- | 4 |
| 3. Միավորային գնահատումը ըստ վերջնարդյունքների բնութագրիչների (մաթեմատիկա 5, թեմա 4-ի օրինակով)----- | 6 |
| 4. Եզրակացություն ----- | 17 |
| 5. Գրականության ցանկ----- | 18 |

Ներածություն

Ա. Էյնշտեյնն ասել է. *«Դասարանում յուրաքանչյուրը հանճարեղ է, բայց եթե դուք ձկանը պետք է գնահատեք ծառի վրայով սողալու կարողության համար, ապա նա ամբողջ կյանքում կտառապի այն մտքից, որ ինքն անկարող է»:*

Յուրաքանչյուր հասարակություն կարևորում է գիտելիքը: Գիտելիքը ուժ է, և կրթված մարդն, այնուամենայնիվ, գտնում է իր ճիշտ տեղն ու դիրքը՝ արժանանալով շրջապատի համակրանքին և ուշադրությանը: Իսկ ինչպե՞ս չափել գիտելիքը: Այս հարցին պատասխանելու համար մեզ օգնության է գալիս *գնահատումը*:

Գնահատումը սովորողի մասին տեղեկություն ստանալու, հավաքելու, վերլուծելու և դրա հիման վրա հանրակրթության բովանդակային և կազմակերպչական աշխատանքների արդյունքներն ի մի բերելու և վերահսկելու գործընթաց է:

Գնահատման հիմնական նպատակը սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացման ու տիրապետման աստիճանի, նրանց անձնային որակների ստուգումն է, ինչպես նաև ուսման որակի բարելավումն ու վերահսկումն է: Գնահատման գործընթացի հիմքում ընկած են հավաստիության, հուսալիության, օբյեկտիվության, մատչելիության, արդարության և թափանցիկության սկզբունքները: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի ուսումնառության արդյունքների գնահատումն իրականացվում է նույն սկզբունքներով՝ ապահովելով սովորողի անհատական ուսուցման պլանով նախատեսված խելամիտ հարմարեցումները, մատչելի ձևաչափերը, անհատական օժանդակ սարքավորումներն ու միջոցները:

Գնահատման հավաստիության, հուսալիության, օբյեկտիվության, մատչելիության, արդարության և թափանցիկության սկզբունքները պահպանելու համար անհրաժեշտ է ճիշտ ընկալել յուրաքանչյուր թեմայի վերջնարդյունքները և դրանց հիման վրա կատարել վերջնական գնահատում, ինչը դյուրըմբռնելի պիտի լինի ոչ միայն աշակերտի, այլ նաև նրա ծնողի համար:

Գնահատումն ուսուցման գործընթացի պարտադիր բաղադրիչ է, այդ իսկ պատճառով հարկավոր է մանրամասնորեն ուսումնասիրել և բացահայտել գնահատման ժամանակակից մեթոդներն ու ձևերը:

Գնահատում: Գնահատման տեսակները

Կրթական գնահատումը ուսումնական գործընթացի արդյունավետության ու ուսուցման արդյունքների բացահայտման միջոց է, այն օգնում է պարզել յուրաքանչյուր սովորողի գիտելիքների, կարողությունների, հմտությունների մակարդակը, նրանց արժեքային համակարգը: Գնահատումը առավել ընդհանուր բնորոշմամբ կարող ենք ձևակերպել, որ այն պարբերական գործընթաց է, որը որոշում է ձեռք բերած գիտելիքների ու կարողությունների արժեքներն ու նշանակությունը:

Կրթական գնահատումը նկարագրում է ցանկացած գործունեություն, որը կարող է տեղի ունենալ սովորողի կամ սովորողների գիտելիքների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով: Նոր մոտեցումներով գնահատումը, ոչ միայն սովորողի առաջադիմության փաստագրումն է, այլև ուսուցման ընթացքի խթանման կարգավորման, վերահսկման եւ բարելավման մեխանիզմ:

Գնահատման կարևոր խնդիրներից մեկը նրա ինքնանպատակ չլինելն է: Գնահատականը պետք է նպատակաուղղված լինի սովորողի ինչպես կրթական, այնպես էլ անհատական կարողությունների զարգացմանը: Աշակերտին գնահատելիս պետք է հիմնվել անհատական համեմատական կողմնորոշման վրա՝ աշակերտի առաջընթացը, զարգացման առանձնահատկությունները, ուսումնական գործընթացի յուրահատկությունները, համեմատել ոչ թե մյուս աշակերտների, այլ հենց իրենց հետ: Ըստ նպատակի՝ կիրառվում է սովորողի ուսումնառության արդյունքների գնահատման երեք տեսակ.

1. **Հայտորոշիչ գնահատում**
2. **Ձևավորող գնահատում**
3. **ամփոփիչ(միավորային և բնութագրող)**

Հայտորոշիչ գնահատում

Հայտորոշիչ գնահատման նպատակն է՝ բացահայտել սովորողների նախնական գիտելիքները, հմտությունները, վերաբերմունքն ու արժեքներն ուսումնական գործընթացի որևէ փուլի՝ ուսումնական տարվա, կիսամյակի, առարկայի, դասընթացի, նոր թեմայի ուսումնասիրման մեկնարկից առաջ: Հայտորոշիչ գնահատման ձևը ընտրուն է ուսուցիչը

Ձևավորող գնահատում

Ձևավորող գնահատումը ուսումնական գործընթացի բաղադրիչ է, որի նպատակն է բացահայտել յուրաքանչյուր սովորողի կամ ամբողջ դասարանի ձեռքբերումները, դժվարությունները, բացթողումները՝ ուսուցման և ուսումնասիրության գործընթացի բարելավման համար: Ձևավորող գնահատումն իրականացվում է 1-12-րդ դասարաններում. միավոր չի նշանակվում:

Ամփոփիչ գնահատում

Ամփոփիչ գնահատման նպատակն ուսումնական առարկաների չափորոշիչներով և ծրագրերով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան սովորողի ուսումնական ձեռքբերումների գնահատումն է՝ դասի, թեմայի, կիսամյակի, ուսումնական տարվա ավարտին, ինչպես նաև կրթական աստիճանի ավարտին՝ ամփոփիչ ատեստավորման միջոցով: Ամփոփիչ գնահատումն իրականացվում է միավորային կամ բնութագրող գնահատման միջոցով: Ամփոփիչ գնահատման արդյունքների հիման վրա ձևավորվում է կիսամյակային, իսկ կիսամյակային գնահատման արդյունքների հիմա վրա՝ տարեկան ամփոփիչ գնահատականը:

Հաստատության 1-4-րդ դասարաններում և 5-րդ դասարանի առաջին կիսամյակում սովորողների կիսամյակային ամփոփիչ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով:

Յուրաքանչյուր սովորողի համար կազմվում է ուսումնական առաջադիմության բնութագիր:

Հաստատության 5-րդ դասարանի 2-րդ կիսամյակից մինչև 12-րդ դասարանն ընդհանուր ամփոփիչ գնահատում իրականացվում է միավորային գնահատման միջոցով:

Միավորային գնահատում

Միավորային գնահատումը կիրառվում է 5-րդ դասարանի երկրորդ կիսամյակից սկսած: Միավորային գնահատման դեպքում կիրառվում է սովորողների գնահատման 10-միավորային սանդղակ, որտեղ որևէ նիշ անբավարար գնահատական չէ: Միավորային գնահատման ցանկացած ձևի կիրառմանը պետք է նախորդեն հայտորոշիչ և ձևավորող գնահատումներ:

**Միավորային գնահատումը ըստ վերջնարդյունքների բնութագրիչների
(մաթեմատիկա 5, թեմա 4-ի օրինակով)**

| Թեմա 4` Բնական թվերի բաժանելիությունը | | |
|--|---|--|
| Բովանդակային բաղադրիչ 1 | Մ5.ԹԹՀ.ԹԲ.2: Սահմանի պարզ, բաղադրյալ, փոխադարձ պարզ թվեր հասկացությունները | |
| Սանդղակ | Բնութագրիչներ` ըստ վերջնարդյունքների | Հարցեր Առաջադրանքներ |
| Ա -1 | <ul style="list-style-type: none"> Սահմանում է պարզ, բաղադրյալ, թվեր հասկացությունները իր բառերով: | <ul style="list-style-type: none"> Այն բնական թիվը, որն ունի միայն երկու բաժանարար` ինքը և 1-ը, կոչվում է պարզ թիվ Այն բնական թիվը, որը իրենից և 1-ից բացի ունի նաև այլ բաժանարար կոչվում է պարզ թիվ |
| Ա -2 | <ul style="list-style-type: none"> Դասակարգում է պարզ և բաղադրյալ թվերը մինչև 15-ը: | <ul style="list-style-type: none"> Գրի՛ր 15-ից փոքր պարզ և բաղադրյալ թվերը |
| Բ - 3 | <ul style="list-style-type: none"> Օգտագործում է պարզ թվերի աղյուսակը տրված թվերից պարզ և բաղադրյալ թվերը առանձնացնելու համար: | <ul style="list-style-type: none"> Օգտվելով պարզ թվերի աղյուսակից, առանձնացրո՛ւ պարզ և բաղադրյալ թվերը` 1, 95, 211, 348, 47, 491, 653, 651, 83, 900 |
| Բ - 4 | <ul style="list-style-type: none"> Սահմանում է փոխադարձաբար պարզհասկացությունը: Պարզ թվերը օգտագործելով` լուծում է պարզագույն | <ul style="list-style-type: none"> Աստղանիշի փոխարեն գրի՛ր այն բոլոր պարզ թվերը, որոնց դեպքում $5 \cdot * + 1 < 25$անհավասարությունը ճիշտ է: |

| | անհավասարություններ : | |
|-------|--|---|
| Գ - 5 | <ul style="list-style-type: none"> • <i>Տարբերակում է</i>, որ ոչ բոլոր կենտ թվերն են պարզ և պարզ թվերի մեջ կա միայն մեկ գույգ թիվ: | <ul style="list-style-type: none"> • Բաղադրյալ են արդյո՞ք բոլոր գույգ թվերը: |
| Գ - 6 | <ul style="list-style-type: none"> • <i>Բացատրում է</i>, թե ինչու է թիվը պարզ կամ բաղադրյալ և <i>տարբերակում է</i> դրանք՝ առանց օգտվելու պարզ թվերի աղյուսակից: | <ul style="list-style-type: none"> • Գրի՛ր 1-ից մինչև 50-ը եղած պարզ թվերը՝ առանց աղյուսակից օգտվելու : |
| Դ - 7 | <ul style="list-style-type: none"> • <i>Հիմնավորում է</i> 1 թվի ո՛չ պարզ, ո՛չ բաղադրյալ լինելը: | <ul style="list-style-type: none"> • Ո՞րն է ամենափոքր պարզ թիվը: |
| Դ - 8 | <ul style="list-style-type: none"> • <i>Հիմնավորում է</i>, որ փոխադարձաբար պարզ թվերի ամենամեծ ընդհանուր բաժանարարը 1- ն է: • <i>Հիմնավորում է</i>, թե ինչու են ցանկացած երկու հաջորդական թվերը փոխադարձաբար պարզ: | <ul style="list-style-type: none"> • 2-ը և 3-ը պարզ թվեր են, որոնց տարբերությունը հավասար է 1-ի: Կա՞ արդյոք պարզ թվերի ուրիշ այդպիսի գույգ: • Կազմի՛ր փոխադարձաբար պարզ թվերի գույգեր, գտի՛ր նրանց ամենամեծ ընդհանուր բաժանարարը և կատարի՛ր եզրակացություն: |
| Ե - 9 | <ul style="list-style-type: none"> • «Էրատոսթենեսի մաղի » միջոցով <i>ստեղծում է</i> 100 -ից փոքր բոլոր պարզ թվերի աղյուսակը: | <ul style="list-style-type: none"> • Ընտրի՛ր 8թվի հետ փոխադարձաբար պարզ՝ 1 պարզ և 1 բաղադրյալ , թիվ: |
| Ե- 10 | <ul style="list-style-type: none"> • <i>Զարգացնում է</i> այն գաղափարը, որ փոխադարձաբար պարզ թվերի գույգը կարող է լինել կազմված | <ul style="list-style-type: none"> • Զամբյուղում կա 35 խնձոր: Հայտնի է, որ յուրաքանչյուր երեխա ստացավ հավասար քանակով խնձորներ, որոնք արտահատված են պարզ թվերով: Քանի՞ երեխա կա, և յուրաքանչյուրը քանի |

| | | |
|---------------------------------|---|--|
| | <p>բաղադրյալ թվերից, պարզ թվերից, ինչպես նաև պարզ և բաղադրյալ թվերից:</p> <ul style="list-style-type: none"> • <i>Կիրառում է</i> պարզ և բաղադրյալ թվերի մասին ունեցած գիտելիքները • անձանոթ իրավիճակներում: | <p>խնձոր ստացավ:</p> |
| <p>Բովանդակ ային բաղադրիչ 2</p> | <p>Մ5.ԹԹՀ.ԹՀԱԳ.1 Որոշի թվի պարզ կամ բաղադրյալ լինելը</p> | |
| <p>Սանդղակ</p> | <p>Բնութագրիչներ՝ ըստ վերջնարդյունքների</p> | <p>Հարցեր Առաջադրանքներ</p> |
| <p>Ա -1</p> | <ul style="list-style-type: none"> • <i>Թվարկում է</i> պարզ և բաղադրյալ թվերը օգտվելով աղյուսակից: | <ul style="list-style-type: none"> • Օտվելով պարզ թվերի աղյուսակից 1-15 թվերի շարքից առանձնացրու՝ պարզ թվերը: |
| <p>Ա -2</p> | <ul style="list-style-type: none"> • <i>Ճանաչում է</i> միանիշ պարզ թվերը: | <ul style="list-style-type: none"> • Գրի՛ր միանիշ պարզ թվերը : |
| <p>Բ - 3</p> | <ul style="list-style-type: none"> • Թվերի բաժանարարները գտնելու միջոցով <i>ցույց է տալիս</i> թվի (օրինակ՝ 1-50) պարզ | <p>Գտի՛ր 8, 13, 21, 35, 19 թվերի բաժանարարները և</p> |

| | | |
|-------|---|--|
| | կամ բաղադրյալ լինելը: | կախված բաժանարարների քանակից որոշի՞ր թիվը պարզ է, թե՞ բաղադրյալ : |
| Բ - 4 | <ul style="list-style-type: none"> • Օգտվելով 2-ի, 5-ի և 10-ի բաժանելիության հայտանիշներից <i>պարզում է</i> թվի պարզ կամ բաղադրյալ լինելը, օրինակ՝ 1-50 միջակայքում: | Օգտվելով 2-ի, 5-ի և 10-ի բաժանելիության հայտանիշներից, պարզի՞ր թիվը պարզ է, թե՞ բաղադրյալ 14, 2, 5, 25, 29, 13, 31, 30, 45, 42: |
| Գ - 5 | <ul style="list-style-type: none"> • <i>Օգտվելով</i> «Էրատոսթենեսի մաղ»-ից, <i>կարողանում է</i> պարզել թվի պարզ կամ բաղադրյալ լինելը, (օրինակ 1-15 թվերի միջակայքում): | «Էրատոսթենեսի մաղ»-ի միջոցով պարզի՞ր 1-15 թվերի մեջ պարզ թվերի քանակը: |
| Գ - 6 | <ul style="list-style-type: none"> • <i>Օգտվելով</i> «Էրատոսթենեսի մաղ»-ից, <i>կարողանում է</i> պարզել թվի պարզ կամ բաղադրյալ լինելը, (օրինակ 1-30 միջակայքում): | «Էրատոսթենեսի մաղ»-ից միջոցով պարզի՞ր 1-30 թվերի մեջ բաղադրյալ թվերի քանակը: |
| Դ - 7 | <ul style="list-style-type: none"> • <i>Օգտվելով</i> բաժանելիության հայտանիշներից, <i>պարզում է</i> երկնիշ թվի պարզ կամ բաղադրյալ լինելը: | Օգտվելով բաժանելիության հայտանիշներից, պարզի՞ր, քանի՞ պարզ և քանի՞ բաղադրյալ թիվ կա 40-70 թվերի միջև: |
| Դ - 8 | <ul style="list-style-type: none"> • <i>Օգտվելով</i> բաժանելիության հայտանիշներից, <i>պարզում է</i> եռանիշ թվի պարզ կամ բաղադրյալ լինելը: | Օգտվելով բաժանելիության հայտանիշներից՝ պարզի՞ր, քանի՞ պարզ և քանի՞ բաղադրյալ թիվ կա 120-160 |

| | | |
|----------------------------------|--|---|
| | | թվերի մեջ |
| Ե - 9 | <ul style="list-style-type: none"> Կազմում է քայլաշար(ալգորիթմ),որի միջոցով բաղադրյալ թիվը ներկայացնում է պարզ թվերի արտադրյալի տեսքով: | 50 թիվը ներկայացրու՝ պարզ թվերի արտադրյալի տեսքով: |
| Ե- 10 | <ul style="list-style-type: none"> Որոշում է թվի պարզ կամ բաղադրյալ լինելը անձանոթ իրավիճակներում: | Պարզել 2431 թիվը պարզ է, թե՞ ոչ: |
| Բովանդակ ային բաղադրիչ՝ 3 | Մ5.ԹԹՀ.ԹՀԱԳ.2: Վերլուծի բաղադրյալ թիվը պարզ արտադրիչների | |
| Սանդակ | Բնութագրիչներ՝ ըստ վերջնարդյունքների | Հարցեր Առաջադրանքներ |
| Ա -1 | <ul style="list-style-type: none"> Աղյուսակի <i>օգնությամբ գտնում է</i> տրված թվի (օրինակ՝ 1-20 միջակայքում)ամենափոքր պարզ բաժանարարը: | Գտի՛ր 18 թվի ամենափոքր պարզ բաժանարարը: |
| Ա -2 | <ul style="list-style-type: none"> Աղյուսակի <i>օգնությամբ գտնում է</i> տրված թվի (օրինակ՝ 1-24 միջակայքում) որևէ պարզ բաժանարար: | Գտի՛ր 21 թվի բոլոր պարզ բաժանարարները: |
| Բ - 3 | <ul style="list-style-type: none"> <i>Վերլուծում է</i> բաղադրյալ (օրինակ՝ 1-30 միջակայքում) թիվը պարզ արտադրիչների՝ օգտվելով բաժանման հաշվեկանոնից: | Օգտվելով բաժանման հաշվեկանոնից, 24 թիվը վերլուծի՛ր պարզ արտադրիչների: |
| Բ - 4 | <ul style="list-style-type: none"> <i>Վերլուծում է</i> բաղադրյալ (օրինակ՝ 1-50 միջակայքում) թիվը պարզ արտադրիչների՝ օգտվելով բաժանման հաշվեկանոնից : | Օգտվելով բաժանման հաշվեկանոնից, 48 թիվը վերլուծի՛ր պարզ արտադրիչների: |
| Գ - 5 | <ul style="list-style-type: none"> <i>Վերլուծում է</i> բաղադրյալ (օրինակ՝ 1-30 միջակայքում) թիվը պարզ արտադրիչների՝ նաև <i>կիրառելով</i> բաժանելիության | Օգտվելով բաժանելիության հայտանիշներից՝ |

| | | |
|--------|---|--|
| | հայտանիշները: | 28 թիվը վերլուծի՝ ը պարզ արտադրիչների: |
| Գ - 6 | <ul style="list-style-type: none"> Վերլուծում է բաղադրյալ (օրինակ՝ 1-100 միջակայքում) թիվը պարզ արտադրիչների՝ նաև կիրառելով բաժանելիության հայտանիշները: | Օգտվելով բաժանելիության հայտանիշներից, 72 թիվը վերլուծի՝ ը պարզ արտադրիչների |
| Դ - 7 | <ul style="list-style-type: none"> Կիրառում է բաղադրյալ թվի վերլուծումը պարզ արտադրիչների առաջադրանքների լուծման ժամանակ: | Ո՞րն է 48 թվի վերլուծությունը պարզ արտադրիչների արտադրյալի տեսքով $ա. 2 \cdot 2 \cdot 2 \cdot 2 \cdot 3$ $բ. 2 \cdot 4 \cdot 2 \cdot 3$ $գ. 1 \cdot 2 \cdot 2 \cdot 2 \cdot 2 \cdot 3$ $դ. 8 \cdot 6:$ |
| Դ - 8 | <ul style="list-style-type: none"> Հիմնավորում է, որ վերլուծության արդյունքում բոլոր արտադրիչները պարզ թվեր են: | Որևէ թվի օրինակով հիմնավորի՝ ը, որ ցանկացած բաղադրյալ թիվ վեր է լուծվում պարզ արտադրիչների արտադրյալի տեսքով: |
| Ե - 9 | <ul style="list-style-type: none"> Բաղադրյալ թվի վերլուծությունը կիրառում է մասամբ փոխված իրավիճակում: | <ul style="list-style-type: none"> Գտի՝ ը որևէ բաղադրյալ թիվ, որը կարելի է ներկայացնել 2 պարզ թվերի արտադրյալի տեսքով: |
| Ե - 10 | <ul style="list-style-type: none"> Լուծում է ոչ ստանդարտ խնդիրներ: | 8 թիվը ներկայացրո՞ւ՝ մի |

| | | |
|-------------------------|---|--|
| | | քանի արտադրիչների արտադրյալի տեսքով, որ այդ արտադրիչների գումարը լինի 8: |
| Բովանդակային բաղադրիչ 4 | Մ. ԹԹՀ. ԹՀԱԳ.3: Գտնի տրված երկու բնական թվերի ամենափոքր ընդհանուր բազմապատիկը, ամենամեծ ընդհանուր բաժանարարը: | |
| Սանդղակ | Բնութագրիչներ՝ ըստ վերջնարդյունքների | Հարցեր Առաջադրանքներ |
| Ա - 1 | <ul style="list-style-type: none"> Աղյուսակից <i>օգտվելով</i>՝ ցույց է տալիս տրված թվի բազմապատիկը: | Ո՞րն է 8 թվի բազմապատիկ: Ա)1 բ)4 գ)16 |
| Ա - 2 | <ul style="list-style-type: none"> <i>Ճանաչում է տրված թվի բազմապատիկը և բաժանարարը:</i> | 8թվի համար նշի՛ր , ո՞րն է բազմապատիկ, ո՞րն է բաժանարար՝ 4, 16: |
| Բ - 3 | <ul style="list-style-type: none"> <i>Գտնում է</i> միանիշ որևէ թվի երկու բազմապատիկ և երկու բաժանարար: | Գտի՛ր 6 թվի ա.երկու բազմապատիկ, բ. երկու բաժանարար: |
| Բ - 4 | <ul style="list-style-type: none"> <i>Գտնում է</i> (օրինակ՝ 1-20 միջակայքի) որևէ թվի հինգ բազմապատիկ և բոլոր բաժանարարները: | Գտի՛ր 12-ի բոլոր բաժանարարները և հինգ բազմապատիկ: |
| Գ - 5 | <ul style="list-style-type: none"> <i>Տարբերակում է</i> բազմապատիկը բաժանարարից: <i>Ճանաչում է</i> ամենամեծ ընդհանուր բաժանարարի և ամենափոքր ընդհանուր բազմապատիկի նշանակումները: | <ul style="list-style-type: none"> Տրված թվերի շարքից առանձնացրո՛ւ 8-ի բազմապատիկները և բաժանարարները 1, 16, 2, 32, 4,24, 40, 8,: Գրառի՛ր մաթեմատիկորեն 5 և 26 թվերի ամենամեծ ընդհանուր բաժանարարները: |

| | | |
|-------|---|---|
| | | 52 և 9 թվերի ամենափոքր ընդհանուր բազմապատիկ - ները |
| Գ - 6 | <ul style="list-style-type: none"> • <i>Գտնում</i> է երկու թվերի ընդհանուր բաժանարարները և առանձնացնում է ամենամեծը; • <i>Գտնում</i> է երկու թվերի ընդհանուր բազմապատիկները և առանձնացնում է ամենափոքրը: | <ul style="list-style-type: none"> • Գտի՛ր 16 և 24 թվերի ընդհանուր բաժանարարները և նշի՛ր դրանցից ամենամեծը : • Գտի՛ր 6 և 8 թվերի առնվազն 3 ընդհանուր բազմապատիկ և նշի՛ր դրանցից ամենափոքրը: |
| Դ - 7 | <ul style="list-style-type: none"> • <i>Կարողանում</i> է գտնել երկու բնական թվերի ամենափոքր ընդհանուր բազմապատիկը, ամենամեծ ընդհանուր բաժանարարը՝ թվերը պարզ արտադրիչների վերլուծելով: | Հաշվի՛ր պարզ արտադրիչների վերլուծելու միջոցով ա.(18,26) բ.[16,24]: |
| Դ - 8 | <ul style="list-style-type: none"> • <i>Հիմնավորում</i> է, որ ամենամեծ ընդհանուր բազմապատիկ գոյություն չունի, իսկ ցանկացած թվերի համար ամենափոքր ընդհանուր բաժանարարը 1- ն է: • <i>Ձևակերպում</i> է երկու բնական թվերի ամենափոքր ընդհանուր բազմապատիկը, (ամենամեծ ընդհանուր բաժանարարը) գտնելու հաշվեկանոնը : | <ul style="list-style-type: none"> • Ի՞նչ ամենափոքր երկարություն պետք է ունենա պարանը, որպեսզի հնարավոր լինի այն առանց մնացորդի բաժանել, ինչպես 4մ երկարությամբ կտորների, այնպես էլ՝ 5: • Բացատրի՛ր, թե ինչու երկու թվերի ամենամեծ ընդհանուր բաժանարարը չի կարող այդ թվերից մեծ լինել |

| | | |
|------------------------|---|--|
| | | <ul style="list-style-type: none"> • 12 և 36 թվերը համար բացատրի՝ ր ամենափոքր ընդհանուր բազմապատիկը, ամենամեծ ընդհանուր բաժանարարը գտնելու քայլաշարերը : |
| Ե - 9 | <ul style="list-style-type: none"> • <i>Դաստոյանություն է անում</i>, թե ինչպես գտնել տրված երկու բնական թվերի ամենափոքր ընդհանուր բազմապատիկը, ամենամեծ ընդհանուր բաժանարարը, երբ <i>ա. թվերից մեկը պարզ է</i> <i>բ. թվերը փոխադարձ պարզ են:</i> | <ul style="list-style-type: none"> • Առաջարկի՝ ր հարմար եղանակ, երկու փոխադարձ պարզ թվերի ամենափոքր ընդհանուր բազմապատիկը գտնելու համար: • Առաջարկի՝ ր երկու թվերի ամենամեծ ընդհանուր բաժանարարը գտնելու հարմար եղանակ, երբ թվերից մեկը պարզ է : |
| Ե- 10 | <ul style="list-style-type: none"> • <i>Ձևակերպում է</i> երկուսից ավել բնական թվերի ամենափոքր ընդհանուր բազմապատիկը (ամենամեծ ընդհանուր բաժանարարը) գտնելու հաշվեկանոնը: | Կազմի՝ ր երկուսից ավել բնական թվերի ամենափոքր ընդհանուր բազմապատիկը, ամենամեծ ընդհանուր բաժանարարը գտնելու քայլաշար: |
| Բովանդակ ալին բաղադրիչ | Մ5. ԹԹՀ. ԹՀԱԳ.4: Կիրառի 2-ի, 3-ի, 4-ի, 5-ի, 9-ի, 10-ի բաժանելիության հայտանիշները | |

| 5 | | |
|---------|--|---|
| Սանդղակ | Բնութագրիչներ՝ ըստ վերջնարդյունքների | Հարցեր Առաջադրանքներ |
| Ա -1 | <ul style="list-style-type: none"> Ճանաչում է 2, 5, 10-ի վրա բաժանվող թվերը: | Ո՞ր թվերն են բաժանվում 10-ի 50,25,6,70: |
| Ա -2 | <ul style="list-style-type: none"> Տարբերակում է 2,5,10-ի վրա բաժանվող թվերը: | Առանձնացրո՛ւ 2-ի ,5-ի, 10-ի վրա բաժանվող վերը՝ 25,50,6,10,24: |
| Բ - 3 | <ul style="list-style-type: none"> Նկարագրում է 3-ի, 9-ի բաժանելիության հայտանիշները: | <ul style="list-style-type: none"> 651 թիվը բաժանվո՞ւմ է 3-ի: |
| Բ - 4 | <ul style="list-style-type: none"> Մահմանում է 4-ի բաժանելիության հատանիշը, բերում է օրինակներ: | Ձևակերպի՛ր 4-ի բաժանելիության հայտանիշը, գրի՛ր 4- վրա բաժանվող թվերի օրինակներ: |
| Գ - 5 | <ul style="list-style-type: none"> Կիրառում է 2-ի, 5-ի ,10-ի բաժանելիության հայտանիշները: | 30, 634, 200, 555, 625, 730, 1020, 85 , թվերի շարքից առանձնացրո՛ւ ա. 2-ի բաժանվող թվերը բ. 5-ի բաժանվող թվերը գ. 10-ի բաժանվող թվերը |
| Գ - 6 | <ul style="list-style-type: none"> Կիրառում է բաժանելիության բոլոր հայտանիշները: | Գրի՛ր 5 քառանիշ թիվ, որոնք բաժանվում են ա.3-ի, բ. 4-ի, գ. 9-ի |
| Դ - 7 | <ul style="list-style-type: none"> Հիմնավոր ձևով կիրառում է բաժանելիության հայտանիշները՝ տրված | *-ի փոխարեն տեղադրել այնպիսի թվանշան, որ |

| | | |
|-------|--|---|
| | բնական թվում անհայտ թվանշանը գտնելու համար: | 152*4 թիվը բաժանվի ա.3-ի բ. 4-ի գ. 9-ի |
| Դ - 8 | <ul style="list-style-type: none"> • <i>Ձևակերպում և ընդհանրացնում է</i> 2-ի և 10-ի, 5-ի և 10-ի, 3-ի և 9-ի բաժանելիության հայտանիշները: | <ul style="list-style-type: none"> • Գտի՛ր երկնիշ թիվ, որը բաժանվում է 2-ի, բայց չի բաժանվում 10-ի: • Գտի՛ր երկնիշ թիվ, որը բաժանվում է 5-ի, բայց չի բաժանվում 10-ի: • Գտի՛ր երկնիշ թիվ, որը բաժանվում է 3-ի, բայց չի բաժանվում 9-ի: |
| Ե - 9 | <ul style="list-style-type: none"> • <i>Ձևակերպում է</i> միևնույն բնական թվի համար միաժամանակ մի քանի հայտանիշների կիրառությունը: | *-ի փոխարեն տեղադրի՛ր այնպիսի թվանշան, որ 2374* թիվը բաժանվի և՛ 2-ի, և՛ 3-ի, և՛ 4-ի: |
| Ե- 10 | <ul style="list-style-type: none"> • <i>Հետազոտում և բացահայտում է</i> այլ թվերի բաժանելիության հայտանիշներ: | Հետազոտի՛ր և գտի՛ր (օրինակ 6-ի, 7-ի, 8-ի, 11-ի, 15-ի) բաժանելիության հայտանիշներից որևէ մեկը: |

Եզրակացություն

Գնահատումը ուսումնական գործընթացի և ուսուցչի կարևոր օղակն է: Առանց աշակերտների գնահատման և նրանց հետ փոխադարձ կապի ուսումնական գործընթաց չի կարող լինել: Լավ դասավանդումը ենթադրում է յուրացում, իսկ յուրացման աստիճանը դրսևորվում է գնահատման մեջ: Գնահատումը նախ դաստիարակության միջոց է, ուսման նկատմամբ երեխաների մեջ դրական վերաբերմունք ձևավորելու խթան: Գնահատումը ուսումնական գործունեությանը մշտապես հետևելու, ժամանակին թերությունները հայտնաբերելու, աշակերտին իր ուժերի նկատմամբ վստահություն ներշնչելու նպատակ է հետապնդում: Ուսուցչի խնդիրն է՝ արձանագրել երեխայի թեկուզև աննշան առաջընթացը, խրախուսել՝ դրսևորելու իր կարողությունները և վայելելու գիտելիքը կիրառել կարողանալու հաճույքը, ինչպես նաև զգալու նոր գիտելիքներ ձեռք բերելու անհրաժեշտությունը:

Դպրոցում պետք է բացառվեն գնահատման հարցում անարդար մոտեցումները: Աշակերտին դպրոցում ամենից շատ ուրախացնում է ուսուցչի վերաբերմունքը: Ուսուցման և դաստիարակության բարդ խնդիրների հաջող լուծումը մեծապես կախված է ուսուցչից: Ուսուցչի իրական գնահատականը համարվում է կարևոր խթան՝ չափորոշիչներով սահմանված նպատակներին հասնելու համար: Ճիշտ գնահատումը՝ յուրաքանչյուր աշակերտին անհատական մոտեցումը, նպաստում են, որ աշակերտը ոգևորվի և լրացնի գիտելիքների պաշարը:

Հետազոտական աշխատանքի վերլուծության արդյունքում գալիս ենք այն եզրակացության որ ,ուսուցիչը պետք է գիտակցի,որ դասի նպատակը որոշում է ինքը,իսկ վերջնարդյունքին հասնում է աշակերտի հետ միասին: Ճիշտ հասկանալով և մանրատելով վերջնարդյունքները՝ ուսուցիչը կկարողանա ճիշտ գնահատել և

ամենակարևորը մեկնաբանել, պարզաբանել իր կողմից բարձրաձայնած գնահատականը:

Գնահատել նշանակում է ստեղծագործել:

Գյոթե

Օգտագործված գրականություն

1. [ԿԶՆԱԿ հիմնադրամ, պաշարների շտեմարան](#)
2. [Առարկայկան չափորոշիչ և ծրագիր](#)
3. [ՀՊԶ](#)
4. [Բլում-Անդերսոնի աստիճանակարգ](#)
5. [Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշներ](#)